«Սուննիական ՆԱՏՕ»-ի համակարգային հակասությունները և կազմավորման հեռանկարները

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 13.05.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է մի շարք գործոններ, որոնք որոշում են Թուրքիայի, Պակիստանի, Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի մասնակցությամբ նոր ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման գործընթացը: Ուսումնասիրվում են «Սուննիական ՆԱՏՕ»-ի կազմավորման առարկայական նախադրյալները, որոնք ծագել են Իրանի դեմ 2025 թ. ռազմարշավից հետո անվտանգության նախկին ճարտարապետության քայքայման հետևանքով: Մանրամասն քննարկվում են իրական ինտեգրման կարևորագույն խոչընդոտների 5 մակարդակները. մասնակիցների բազմամակարդակ կախվածություն ուժի գլոբալ բևեռներից (ԱՄՆ և ՉԺՀ), ռազմավարական տարածական միաձուլվածության բացակայություն, պաշտպանական համակարգերի անհամատեղելիություն, քաղաքական վարչակարգերի աններդաշնակություն և ժամանակի սուր պակաս: Առաջարկվում է եզրակացություն, որ, չնայած տպավորիչ կուտակային ներուժին, նախագիծը վտանգված է մնալ հոչակագրային կառուցվածք, որը խոցելի է արտաքին ազդեցության հանդեպ:

Բանալի բառեր. *աշխարհաքաղաքականություն, Առաջավոր Ասիա, «Սուննիական ՆԱՏՕ», Թուրքիա, Պակիստան, Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, տարածաշրջանային անվտանգություն, ռազմավարական տարածական միաձուլում, իրանական ճգնաժամ, ԱՄՆ, ՉԺՀ:*

Նոր դաշինքի աշխարհաքաղաքական պատճառական կապը

Իր նախորդ հրապարակման մեջ ԱՌՎԱԿ կենտրոնն անդրադարձել էր այն պատճառներին և դրդապատճառներին, որոնք Թուրքիային, Պակիստանին, Սաուդյան Արաբիային և հետագայում նրանց միացած Եգիպտոսին դրդել էին բանակցություններ նախաձեռնել իսլամական երկրների նոր ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման հարցի շուրջ: Իրենց նախաձեռնության մեջ նշված պետություններն առաջնորդվում են ինչպես հարևանների հետ բարդ փոխհարաբերությունների լույսի ներքո իրենց պաշտպանունակության մակարդակը բարձրացնելու ձգտումով, այնպես էլ Մերձավոր Արևելքից և Մաղրիբից մինչև Արևելյան Ասիա ռազմավարական նշանակություն ունեցող գոտում անվտանգության հավասարակշռությունը պահպանելու հասունացած անհրաժեշտությամբ: Այդ հավասարակշռությունը քայքայման է ենթարկվում ՆԱՏՕ-ի ճգնաժամի և ԱՄՆ-ի զսպման արտաքին քաղաքական դոկտրինի վերակառուցման նշանների հետևանքով:

Այսպես կոչված «*Ասիական*» կամ «*Սուննիական ՆԱՏՕ*»-ի կազմավորման չափանիշների քննարկման գործընթացը (Եգիպտոսի մասնակցությունը վերջին եզրույթն ավելի ճշգրիտ է դարձնում) հզոր թափ է ստացել Իրանի շուրջ 2025 թ. հուլիսին սկիզբ առած հակամարտության սրումից հետո: Ինչպիսին էլ լինի ամերիկա-իսրայելական ռազմարշավի ավարտը, տարածաշրջանային ճարտարապետության մեջ Իրանի

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 07.05.2026 թ.:

կարգավիճակի արմատական վերանայումը Թուրքիային, Պակիստանին, ՍԱԹ-ին և Կահիրեին ստիպում է հավաքական փոխգործակցության մեխանիզմներ մշակել: Ստեղծվող համակարգը կոչված է դառնալու զսպման համապարփակ գործիք. այն պետք է արդյունավետորեն նվազագույնի հասցնի ռիսկերը շիական բլոկի՝ ապաինտեգրման պարագայում նրա պարտության դեպքում և միաժամանակ սահմանափակի Թեհրանի ազդեցությունն ու միջուկային ներուժը, եթե վերջինս կարողանա պահպանել սուբյեկտայնությունը և ամրապնդվել տարածաշրջանային գերիշխող խաղացողի դերում:

Այսպիսով, հիշյալ պետություններին այս կոալիցիոն ձևաչափի չափանիշների քննարկմանը խթանող նախադրյալները միանգամայն ակնհայտ են ներկայանում ու թելադրված են առարկայական գործընթացների տրամաբանությամբ: Առաջավոր Ասիայում և գլոբալ մակարդակով անվտանգության ավանդական ճարտարապետության առաջընթաց ապրող քայքայումը չորս հիմնական տերություններին ստիպում է դիմել ռազմավարական զսպման վերազգային բազմամակարդակ համակարգի ձևավորման մեխանիզմների որոնման: Տվյալ նախագիծը ենթադրում է հավաքական վերահսկողության հաստատում ոչ միայն ռազմական համակարգում, այլև ապագա դաշինքի պատասխանատվության գոտու տնտեսական ներուժի, պաշարային հիմքի և առանցքային առևտրա-էներգետիկ զարկերակների նկատմամբ:

Ներուժ և իրականություն. մակերեսային հայացք ընդդեմ խորքային վերլուծության

Առաջին հայացքից արտաքին քաղաքական մոտեցումների համահավասարությունը և երկկողմ գործընկերությունների զարգացած ցանցը բարենպաստ համապատկեր են ստեղծում այդ միավորման հաստատութենականացման համար: Կրոնական ինքնությունը, որը պահպանում է հիմնարար զորաշարժային պաշարի դերն իսլամական աշխարհում, հանդես է գալիս որպես լրացուցիչ ցեմենտացնող գործոն: Ձևավորվող դաշինքը, որն ընդգրկում է 1,5 միլիարդ հոգանոց ժողովրդագրական զանգված և ունի 1,5 միլիոն կանոնավոր «*սվիններ*» և 2 միլիոնանոց պահեստազորի ընդհանուր ռազմական բռունցք, տեսականորեն հաստատված հզորությամբ համեմատելի է առաջատար գլոբալ դերակատարների՝ ԱՄՆ-ի, ՉԺՀ-ի և Ռուսաստանի հետ: Այս ուժի համախումբ ներկայացման պայմաններում նախագիծը կարող է վերածվել ազդեցության ինքնուրույն բևեռի, որը միջազգային անվտանգության ճարտարապետության վրա ազդեցության ծավալով համեմատելի է ՆԱՏՕ-ի հետ: Այնուամենայնիվ, խորը վերլուծությունը ցույց է տալիս մի շարք կործանարար գործոնների կառուցվածքային պայմանականությունը: Խորը ներքին հակասությունների և կառուցվածքային խոչընդոտների առկայությունը հարցականի տակ է դնում ռազմաքաղաքական ինտեգրման այն մակարդակին հասնելու հնարավորությունը, որը նախաձեռնողների կողմից հայտարարվում է գործընթացի հանրային տարածքում:

Առավել խորը վերլուծությունը բացահայտում է կառուցվածքային հակասությունների ճյուղավորված համակարգի առկայությունը, որոնց թվում անհրաժեշտ է առանձնացնել հիմնարար գործոնները, որոնք կարող են արժեզրկել «*Սուննիական ՆԱՏՕ*»-ի ներուժը և հարցականի տակ դնել այս նախաձեռնության կենսունակությունը:

1. Բազմամակարդակ կախվածությունը գլոբալ ուժային բևեռներից

Որպես ինքնուրույն և ինքնաբավ կազմակերպության՝ «*Սուննիական դաշինքի*» ձևավորման գլխավոր խոչընդոտներից մեկը նրա նախաձեռնողների բազմամակարդակ կախվածությունն է ուժի տարբեր աշխարհաքաղաքական բևեռներից, որոնք ներկայացնում են ապագա աշխարհակարգը և անվտանգության հավասարակշռությունը տրամագծորեն հակառակ տրամաբանությամբ: Թուրքիան, Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը սերտ կապի մեջ են ամերիկյան ուժի ուղեգծի հետ:

- **Թուրքիայի** ռազմական ներուժի հիմնական բաղադրիչներն ԱՄՆ-ից ուղղակի կախվածության մեջ են գտնվում ինչպես երկկողմ համագործակցության համատեքստում, այնպես էլ ՆԱՏՕ-ական դաշինքի հետ փոխգործակցության հոլովույթում: Չնայած Անկարայի ձգտմանը՝ բազմազանեցնելու պաշտպանական գնումները (ներառյալ ռուսական *C-400 «Տրիումֆ»* համակարգերի մատակարարման 2017 թ. լայն արձագանք ստացած պայմանագիրը), թուրքական զինված ուժերը մնում են խորապես ինտեգրված ՆԱՏՕ-ի տեխնոլոգիական էկոհամակարգում: Ամերիկյան տեխնոլոգիաներից ծայրահեղ կախվածությունը դրսևորվել է Թուրքիային 5-րդ սերնդի *F-35* կործանիչների արտադրության ծրագրից հանելու և արդիականացված *F-16 Block 70*-ների մատակարարման ձգձգումների մեջ, ինչը թուրքական ղեկավարությանն ստիպել է վերանայել խուսավարելու իր քաղաքականությունը: Այս տեխնոլոգիական կապվածությունը սահմանափակում է Անկարայի գործողությունների ազատությունն այնպիսի նոր վերազգային կառույցների ձևավորման շրջանակներում, ինչպիսին «Սուննիական ՆԱՏՕ»-ն է՝ նրա ռազմական հզորությունը զգայուն դարձնելով պատժամիջոցների ճնշման և Վաշինգտոնի քաղաքական որոշումների նկատմամբ:
- **Սաուդյան Արաբիան**, բացի Արևմուտքի հետ խորը ռազմատեխնիկական փոխկապակցվածությունից, կախվածության ծայրահեղ աստիճան է ցուցաբերում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ֆինանսատնտեսական իրավիճակից: Արևմտյան ներդրումային նախագծերում, բանկային գործիքներում և ԱՄՆ պետական պարտատոմսերում ՍԱԹ-ի ինքնիշխան ակտիվների կուտակումը Վաշինգտոնի համար ստեղծում է էր Ռիադի վրա ռազմավարական ազդեցության լծակներ: Դաշինքի հաստատութենականացման դեպքում այդ գործոնն ամերիկյան կողմին թույլ կտա արդյունավետորեն չափավորել դաշինքի գործունեությունը՝ ապահովելով սեփական աշխարհաքաղաքական շահերի գերակայությունը նոր կառույցի ներսում:

- **Եգիպտոսը** նույնպես ենթարկվում է ամերիկյան զգալի ազդեցությանը: Վաշինգտոնը մնում է Կահիրեի գլխավոր դոնորը նրա զինված ուժերին ֆինանսական աջակցության և սպառազինության մատակարարման հարցերում: Այս կախվածությունը խորանում է նրանով, որ Եգիպտոսի ենթակառուցվածքային նախագծերի զգալի մասը, ներառյալ նոր վարչական մայրաքաղաքի կառուցումը, ֆինանսավորվում է արտաքին փոխառությունների հաշվին, այդ թվում՝ ՉԺՀ-ից, ինչը «*կրկնակի կախվածության*» իրավիճակ է ստեղծում: Նոր դաշինքի ձևավորման համատեքստում սա Կահիրեին խոցելի է դարձնում արտաքին ճնշումների առումով՝ սահմանափակելով նրա ինքնավարությունը ռազմավարական պաշտպանական որոշումներ կայացնելու հարցում: Ավելին, ներքին սոցիալ-քաղաքական մարտահրավերները, ինչպիսիք են իսլամիստական ուժերի կողմից ճնշումները և կրոնական փոքրամասնությունների անվտանգության ապահովման խնդիրները, երկրի կառավարությանն ստիպում են արտաքին ռազմաքաղաքական դաշինքների միջոցով կայունության լրացուցիչ երաշխիքներ փնտրել: Սակայն Եգիպտոսի՝ որպես տարածաշրջանում ամերիկյան ռազմական օգնության խոշորագույն շահառուներից մեկի (տարեկան հաշվվում է միլիարդավոր դոլարներով), կարգավիճակը կանխորոշում է Վաշինգտոնի դերը՝ որպես ցանկացած վերազգային կառույցներում Կահիրեի մասնակցության գաղտնի մոդերատորի:
- **Պակիստանը** վերջին 20 տարվա ընթացքում հետևողականորեն նվազագույնի է հասցրել ամերիկյան ազդեցությունը՝ իր ռազմավարական ուղեգիծը կենտրոնացնելով Պեկինի հետ սերտ գործընկերության վրա: Իսլամաբադը ՉԺՀ-ի հետ խորացված ռազմատեխնիկական համագործակցության միջոցով համահարթեցրել է Վաշինգտոնի հետ հարաբերությունների սառեցման հետևանքները, համագործակցություն, որը հիմնված է առաջատար չինական տեխնոլոգիաների փոխանցման վրա, ինչպես նաև էներգետիկայի, լոգիստիկայի և ազգային տնտեսության հումքային հատվածում հսկայական ներդրումների ներգրավման հաշվին: Ներկա փուլում Պակիստանը ցուցաբերում է Չինաստանի հետ վճռական և առաջադեմ փոխկապակցվածություն, ինչը պայմանավորված է Հնդկաստանի հետ բազմամյա դիմակայության սրմամբ և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում իրավիճակի ընդհանուր ապակայունացմամբ:

Բացի այդ, Պեկինն էր Ռիադի վրա ազդեցության զգալի լծակներ ունի, որոնք բավարար են, որպեսզի նրա դիրքորոշումը հաշվի առնվի դաշինքի ձևավորման և գործունեության համատեքստում: Հաշվի առնելով դա՝ կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն և ՉԺՀ-ն՝ ուժի երկու առավել ազդեցիկ և կոշտ մրցակցության մեջ գտնվող գլոբալ բևեռները, իրենց պայքարը կտեղափոխեն ապագա դաշինքի հարթակ՝ նպատակ ունենալով կամ վերահսկողություն հաստատել դրա նկատմամբ, կամ տորպեդահարել ձևաչափը՝ Եվրասիայում անվտանգության ճարտարապետության վերաբերյալ իրենց պատկերացումներին չհամապատասխանելու դեպքում:

2. Ռազմավարական տարածական միաձուլվածության բացակայությունը

Ռազմավարական խնդիրների իրականացման գործուն գործիքակազմով միաձույլ կառույցի ստեղծման հնարավորությունները նվազեցնող էական խոչընդոտ է հանդիսանում նախաձեռնող պետությունների տարածքային տարանջատվածությունը: Միության ներունակ անդամների տեղակայմանն ուղղված մակերեսային հայացքը կարող է հավաքական պաշտպանության կառուցման և աշխարհատնտեսական գերիշխանության ապահովման համար բարենպաստ իրավիճակի պատրանք առաջ բերել: Ենթադրվում է վերահսկողության հաստատում լայնարձակ տարածության նկատմամբ, որն իր մեջ կենտրոնացնում է վիթխարի էներգետիկ պաշարներ՝ գլոբալ նավթային պաշարների ավելի քան 60%-ը և գազի մինչև 55%-ը, որտեղ նաև հատվում են միջազգային բեռնաշրջանառության կեսը սպասարկող մայրուղային լոգիստիկ ուղիները: Այս ջրային տարածքն ու ցամաքը ներառում են Պարսից ծոցը, Կարմիր ծովը, Աֆրիկյան եղջյուրի շրջանը, ինչպես նաև Արևելյան Միջերկրական ծովը, Բալկանները և Սևծովյան-Կասպյան հանգույցը, որոնց գերակայությունը տեսականորեն ապագա դաշինքը վերածում է առանցքային իրավարարի երեք մայրցամաքների հանգույցում:

Այնուամենայնիվ, «*Սուննիական դաշինքի*» գործառնությունը հավասարեցնող վճռական գործոն է հանդիսանում ընդհանուր ցամաքային սահմանների բացակայության պայմաններում օպերատիվ ռազմական փոխգործակցության ապահովման խնդիրը: Միության մասնակիցների միջև ֆիզիկական հաղորդակցության ցանկացած ձև կանխապես բարդանում է մշտական ապակայունացման գոտիների առկայությամբ և թշնամական տարածաշրջանային դերակատարների ներկայությամբ: Այս հոլովույթում տեղին է անդրադառնալ ՆԱՏՕ-ի պատմական փորձին, որի բազմամյա հաջողությունը պայմանավորված էր հենց եվրոպական և հյուսիսամերիկյան հատվածների տարածական շարունակականությամբ՝ Ատլանտյան օվկիանոսում անբաժան գերիշխանության պայմանով: «*Սուննիական բլոկի*» պատկերում ռազմավարական տարածական միաձուլության պակասը դառնում է անհաղթահարելի խոչընդոտ արդյունավետ լոգիստիկ ճարտարապետության կառուցման և ճգնաժամային իրավիճակներում աջակցության ուժերի օպերատիվ տեղափոխման համար:

Խորը ռազմաքաղաքական համախմբման հասնելու համար որպես հիմնարար հրամայական է նարկայանում ռազմավարական տարածական միաձուլվածությունը, որն ապահովում է դերակատարների անարգել ֆիզիկապես հաղորդակցվելու կարողունակությունը: Այս առումով կարելի է ենթադրել, որ 4 տերությունների ներկայիս ձևաչափը նախաձեռնողների կողմից դիտարկվում է որպես ընդլայնված ճարտարապետության առաջնային շրջանակ: Հավանական է, որ հետագա փուլերում կողմերը ծրագրում են համահարթեցնել տարածքային անջատվածության գործոնը՝ ուղեծրում ներառելով աշխարհաքաղաքական վճռական նշանակություն ունեցող փոքր պետությունների ազդեցությունը: Մասնավորապես, խոսքը կարող է վերաբերել այնպիսի երկրների

ներգրավմանը, ինչպիսիք են Սիրիան, Սոմալին կամ Ադրբեջանը, որոնք, չնայած շիա դավանաբանական պատկանելությանը, կայուն կապվածություն են ցուցաբերում իսլամական աշխարհի զարգացման սուննիական ուղեգծի հետ:

Այս հոլովույթում քննադատաբար իմաստավորելու կարիք ունի հարցն առ այն, թե ինչպիսին է «*Սուննիական ՆԱՏՕ*» նախաձեռնության զուգորդման բնույթն էթնիկ հիմքի վրա պաշտպանական ինտեգրում կառուցելու Անկարայի երկարաժամկետ ռազմավարության հետ, որը հայտնի է որպես «*Թյուրքական ՆԱՏՕ*» նախագիծ: Հաշվի առնելով, որ ենթադրական «*Սուննիական դաշինքը*» դիրքավորվում է որպես վերազգային կառույց, որն անտեսում է էթնիկ որոշիչները, օրինաչափ հարց է առաջանում. արդյոք, թուրքական ղեկավարությունը հակվա՞ծ է այս երկու ուղեգծերը միավորել մեկ կառույցի մեջ, թե՞ դրանք դիտարկվում են որպես երկու զուգահեռ, չհատվող աշխարհաքաղաքական նախագծեր: Այն դեպքում, եթե Անկարան ձգտում է դրանց համադրմանը, ապա դա կարող է վկայել ինտեգրման գործընթացների հետագա ծավալման ծրագրերի մասին, ընդհուպ մինչև համաիսլամական համադաշնության «*Ասրիկա*» հավակնոտ հայեցակարգի իրագործումը: Հիշեցնենք, որ այս մոդելը հնչեցվել է թուրքական քաղաքական վերնախավի հետ փոխկապակցված վերլուծական կենտրոնների, մասնավորապես, *ASSAM* կազմակերպության և դրա հետ կապված *SADAT* կառույցի կողմից, որը գործում է մասնավոր ռազմական ընկերության (ՄՌԸ) ձևաչափով:

Այն դեպքում, երբ «*Թյուրքական ՆԱՏՕ*» հայեցակարգը կենտրոնացած է Թուրքիայի, Ադրբեջանի, Հյուսիսային Կիպրոսի և Կենտրոնական Ասիայի 4 հանրապետությունների ռազմական ներուժի համախմբման վրա, «*Ասրիկա*» հավակնոտ հայեցակարգը մտադիր է ձևավորել ամբողջ մահմեդական տարածքն ընդգրկող գլոբալ համադաշնային ճարտարապետություն: Այս մոդելը նախատեսում է 9 տարածաշրջանային միությունների հաստատութենականացում, որոնք բաշխված են մոլորակի առանցքային աշխարհագրական հանգույցներում: Հատկանշական է, որ *ASSAM*-ի փորձագիտական հոլովույթում այդ հատվածներից մեկը, որը ներառում է Թուրքիան, առանձնանում է որպես եզակի բացառություն. դրա նախագծումը հիմնված է ոչ թե տարածքային մերձեցման, այլ էթնիկ միատարրության հրամայականի վրա՝ փաստորեն, կրկնօրինակելով թյուրքական ինտեգրման առանցքի՝ «*Թյուրքական ՆԱՏՕ*»-ի ուրվագծերը՝ Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիայի խորքերը:

Ինչպես կարելի է եզրակացնել դրանից, Անկարան չի պատրաստվում հրաժարվել ծրագրի էթնիկ ռազմա-քաղաքական միությունից, և «*Թյուրքական ՆԱՏՕ*»-ն մնում է որպես առաջնահերթություն: Հետևաբար, «*Սուննիական ՆԱՏՕ*»-ի ձևաչափը, որով ընթանում են խորհրդակցությունները, մեծապես հակասում է էթնիկ թյուրքական ինտեգրման վաղուց ընդունված դոկտրինին: Տվյալ աշխարհաքաղաքական կառուցակարգերի համադրումը դժվարին խնդիր է՝ հաշվի առնելով արաբական հատվածի հիմնավոր մտավախությունները միասնական միության շրջանակներում թյուրքական գործոնի հնարավոր գերիշխանության

վերաբերյալ: Այդ իսկ պատճառով թուրքական ղեկավարությունը, ամենայն հավանականությամբ, հավատարիմ կմնա երկու ձևաչափերի զուգահեռ նախագծման մարտավարությանը՝ Անկարայի հովանու ներքո դրանց հնարավոր միավորման խնդիրը պատվիրակելով երկարաժամկետ ռազմավարական ծրագրավորման հարթություն:

Փորձագիտական կանխատեսումների համաձայն, Էր Ռիադի և Կահիրեի գծով ընթացիկ խորհրդակցությունների շրջանակներում ձևակերպվում է ձևավորվող դաշինքի կառուցվածքում Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրորդական տարածաշրջանային դերակատարների ընդգրկման հնարավորությունը: Այս քայլը դիտարկվում է որպես ռազմավարական տարածական միաձուլվածության պակասը համահարթելու և ենթադրական բլոկին անհրաժեշտ զանգված հաղորդելու փորձ: Այնուամենայնիվ, նման սցենարի իրագործումը քիչ հավանական է թվում առանց Անկարայի և Իսլամաբադի հետ դիրքորոշումների ներդաշնակեցման, որոնք ավանդաբար թերահավատորեն են վերաբերվում զուտ անվտանգություն սպառող պետությունների ներառման գաղափարին: Նույնիսկ ձևական համաձայնության հասնելու դեպքում գործընթացն անխուսափելիորեն կբախվի կողմերի կողմից սեփական արբանյակային երկրների շահերի լոբբինգի հետ, ինչը միավորման հիմքի և կուտակված հակասությունների բեռի կառուցվածքային անկայունության պայմաններում միայն կնվազեցնի ընդլայնման հեռանկարները: Մինչ «*Ասրիկա*» հայեցակարգը մնում է քաղաքական ուտոպիայի հարթությունում, «*Սուննիական ՆԱՏՕ*» նախագիծը վտանգում է կրկնել նրա ճակատագիրը՝ հայտնվելով այնպիսի գլոբալ և տարածաշրջանային խաղացողների հակազդեցության ճիրաններում, ինչպիսիք են Վաշինգտոնը, Պեկինը, Թեհրանը և Թել Ավիվը:

3. Պաշտպանական մեխանիզմների և սպառազինության համակարգերի անհամատեղելիությունը

Միաձույլ և բարձր արդյունավետությամբ ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը խոչընդոտող ամենախնդրահարույց գործոններից մեկը բանակաշինության սկզբունքների, ձևաչափի երկրների պաշտպանական մեխանիզմների և սպառազինության համակարգերի անհամատեղելիությունն ու անսկզբունք համադրումն է:

- **Թուրքիայի** զինված ուժերը կառուցված են Հյուսիսատլանտյան դաշինքի չափանիշներով և հավատարիմ են ՆԱՏՕ-ի չափանիշներին ինչպես ռազմատեխնիկական հագեցվածության, այնպես էլ կանոնադրության, ուսումնական պատրաստության և մարտ վարելու մեթոդների առումով:
- **Եգիպտոսի** զինված ուժերը համատեղում են ինչպես Արևմուտքի երկրների, այնպես էլ ԽՍՀՄ բանակաշինության փորձը՝ միաժամանակ ունենալով հին խորհրդային, չինական և ՆԱՏՕ-ի արտադրության զինանոցներ:
- **ՍԱԹ-ի** զինված ուժերն ունեն արևմտյան (հիմնականում ամերիկյան) արտադրության սպառազինության առավել առաջադեմ տեխնոլոգիական նմուշներ,

սակայն մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով չեն առանձնանում բարձր մարտունակությամբ, ինչի մասին վկայում է Եմենի հութիների հետ պատերազմի բացասական փորձը:

- **Պակիստանի** զինված ուժերը ձևավորել են ռազմական զարգացման սեփական չափանիշները՝ հիմնվելով հիմնականում Հնդկաստանի հետ բազմամյա հակամարտության ընթացքում ձեռք բերված եզակի գործնական փորձի վրա: Սակայն ռազմատեխնիկական հագեցվածության մասով Իսլամաբադը փորձում է համատեղել ինչպես ՆԱՏՕ-ի արտադրության տեխնիկայի համեմատաբար հին նմուշների, այնպես էլ չինական նորագույն մշակումների շահագործումը: Միևնույն ժամանակ, ազգային ռազմարդյունաբերական համալիրը, որը զարգացման կայուն առաջընթաց է ցուցաբերում, մնում է խորապես փոխկապակցված ՉԺՀ-ի պաշտպանական-արդյունաբերական համալիրի հետ՝ սերտ արտադրական և տեխնոլոգիական համագործակցության մեխանիզմների միջոցով:

Նշված բոլոր երկրների զինված ուժերը մարտական փորձի, ռազմական ավանդույթների տարբեր մակարդակ ունեն, ինչպես նաև առկա է տարբեր երկրներից ձեռք բերված ռազմական տեխնիկայի հին և նորագույն նմուշների հարաբերակցության անհամաչափությունը: Այս բոլոր չափանիշների միասնական ստանդարտացման հեռանկարը չափազանց մշուշոտ է, քանի որ այն պահանջում է քաղաքական կամք և զգալի ֆինանսական ծախսեր, ինչը կողմերը դժվար թե պատրաստ լինեն անել ներկա պայմաններում: Այս փուլում նրանցից ոմանք փորձում են երկկողմ զորավարժությունների միջոցով մշակել բանակների փոխգործակցության մեթոդաբանություն (2026 թ. ապրիլին տեղի են ունեցել սաուդա-պակիստանյան և եգիպտա-պակիստանյան լայնածավալ զորավարժություններ) և համատեղ լուծել մարտական խնդիրները: Այնուամենայնիվ, դա հիմնականում պետք է համարել քաղաքական գործողություններ՝ ենթադրական պաշտպանական միության ռազմական բաղադրիչի համար գործնական օգուտի բացակայության պատճառով: «*Սուննիական ՆԱՏՕ*»-ի երկրների բանակները ուժերի և միջոցների աններդաշնակ խճանկար են ներկայացնում, որից հավաքական պաշտպանության միասնական, ներդաշնակ և բարձր արդյունավետ մեխանիզմ հավաքելը բարդ խնդիր է թվում:

4. Քաղաքական համակարգերի տարատեսակությունը և արժեքային աններդաշնակությունը

Ոչ պակաս հարցեր է հարուցում այն երկրների քաղաքական համակարգերի տարատեսակությունը, որոնք ձգտում են «*Սուննիական ՆԱՏՕ*» ստեղծել:

- **Թուրքիան** պաշտոնապես հայտարարում է, որ կողմնակից է ժողովրդավարական հաստատություններին, սակայն տվյալ ճակատամասի հետևում թաքնված է քաղաքական վերնախավի լողարկումը դեպի արմատական ազգայնականություն և ծավալապաշտական պատմական ռևիզիոնիզմի ռազմավարություն:

- **Եգիպտոսը** գործում է ռազմական դասի գերակշռող ազդեցության հոլովույթում՝ իշխանության ընդգծված աշխարհիկ բնույթով, ինչը, այնուամենայնիվ, չի վերացնում իսլամիստական հայացքների խորը արմատավորումը բնակչության լայն շերտերում:
- **Պակիստանը**, տարփողելով խորհրդարանական հանրապետության վարկանիշը, իրականում ցույց է տալիս քաղաքացիական վարչակազմի կոշտ հաշվետվողականությունը բանակի ղեկավարությանը, մինչդեռ հասարակությունը մնում է հիմնականում որոշիչ շարիաթի իրավունքի նորմերի մեջ:
- **Սաուդյան Արաբիան** պահպանում է պահպանողական բացարձակ աստվածապետության կարգավիճակը, որտեղ պետական ապարատի սահմանափակ աշխարհիկացման զարգացող միտումները սոսկ սկսում են բախվել դարավոր կրոնական և քաղաքական ավանդույթների իներցիայի հետ:

Քաղաքական վարչակարգերի տարատեսակությունը և արժեքային աններդաշնակությունը նշանակալի խոչընդոտներ են, որոնք բարդացնում են իշխող վերնախավերի ռազմավարական դիրքորոշումների ներդաշնակեցումը և հասարակությունների նախապատրաստումն ընդհանուր անվտանգության ճարտարապետության շրջանակներում գործելու համար: Միասնական պաշտպանական ուրվագծի ձևավորումը պահանջում է նախագծվող դաշինքի ներսում գոյություն ունեցող խորն էթնիկական, մտավոր և պատմաքաղաքական հակասությունների համահարթեցում: Այս հոլովույթում տեղին է դիմել ՆԱՏՕ-ի փորձին, որի գործառնական կենսունակությունը պայմանավորված է «*արևմտյան ժողովրդավարության միավորող տարածքի*» առկայությամբ և հիմնական սոցիալ-մշակութային նույնականացման ցուցիչների միասնությամբ: Այս համադաս համակարգում Թուրքիան իրենից յուրահատուկ բացառություն էր ներկայացնում. հաշվի առնելով Անկարայի ծայր աստիճան աշխարհաքաղաքական նշանակությունն ու ռազմական հզորությունը՝ Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարությունը հարմարվում էր թուրքական մոդելի առանձնահատկություններին, մոդել, որը ձևական Ժողովրդավարական ընթացակարգերը համատեղում էր քեմալիզմի դոկտրինի և գեներալիտետի գերակշռող ազդեցության հետ:

Հետևաբար, «*Սուննիական ՆԱՏՕ*» նախագիծը բնութագրվում է քաղաքական հաստատությունների համակարգային միատարրության բացակայությամբ: Այս գործոնը, որ մակերեսային դիտարկմամբ աննշան է թվում, իրականում հանդես է գալիս որպես հիմնարար խոչընդոտ, որը խանգարում է նախագծվող ռազմաքաղաքական դաշինքի իրական միատարրության և գործառնական արդյունավետության ձեռքբերմանը:

5. Ժամանակի պակասը և կազմավորման հապճեպ բնույթը

Որպես վերջնական թեզ, անհրաժեշտ է ուշադրություն սևեռել այն փաստի վրա, որ ամենակարևոր խոչընդոտը, որը վնաս է հասցնում առանցքային սուննիական

տերությունների մասնակցությամբ լիարժեք կառույցի ձևավորման ներուժին, ժամանակի պաշարի ծայրաստիճան պակասն է: Հարկ է ընդգծել, որ տվյալ խոչընդոտն արժեզրկում է առաջատար սուննիական դերակատարների իսկապես ինտեգրված միավորման հաստատութենականացման հեռանկարները: Գործընթացի մասնակիցներն ստիպված են դաշինք ձևավորել հապշտապ թափով, ինչը թելադրված է ռազմավարական փոխհամաձայնության հասնելու, հռչակագրային մոտեցումների ներդաշնակեցման և խորը տեխնիկական ու տեխնոլոգիական հակասությունների վերացման անհրաժեշտությամբ: Տարածաշրջանային անվտանգության նախկին ճարտարապետության սրընթաց քայքայումը՝ զուգորդված իրանական ճգնաժամի անկանխատեսելի շարժընթացի հետ, նախաձեռնողներին զրկում է կոալիցիոն մեխանիզմների համակարգված և փուլային կառուցման հնարավորությունից: Ակնհայտ է դառնում, որ վերջին ժամանակներս տեղի ունեցող հակահիրանական ռազմարշավները, հանդես գալով որպես սուննիական աշխարհի՝ հավաքական զսպման ինքնավար համակարգ ստեղծելու ձգտումների կատալիզատոր, միաժամանակ, ծայր աստիճան սեղմ ժամկետներում մերկացնում են համակարգային հակասությունները: Տվյալ գործոնները խոչընդոտում են կենսունակ աշխարհաքաղաքական կառույցի ձևավորմանը, որը կարող է ապահովել խորն աշխարհագրական, աշխարհառազմավարական և մտավոր-գաղափարական խոչընդոտներով բաժանված պետությունների իրական ինտեգրումը:

Ամփոփում

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ նախաձեռնող երկրները կարող են շուտով պաշտոնապես հայտարարել պաշտպանական միության ստեղծման մասին և ընդունել այն կանոնակարգող իրավական հիմքը: Սակայն նման արագացված մեկնարկը դժվար թե համապատասխանի տարածաշրջանում առկա իրավիճակին, որը որոշվում է ԻԻՀ հետ հարաբերությունների սրմամբ և Առաջավոր Ասիայում ԱՄՆ ու ՉԺՀ միջև լայնածավալ միջնորդավորված դիմակայության ելքով: Առաջատար սուննիական երկրներն ուժի անկախ կենտրոնի վերածելու միտքը գլոբալ մակարդակի հավակնոտ խնդիր է, սակայն դրա գործնական իրագործումն ու կայունությունը համակարգային ճգնաժամերի պայմաններում լուրջ կասկածներ են հարուցում: